ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 440

*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

*ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքը (Ներքին Բազմաբերդ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ*

*(Թալին համայնքի (Ներքին Բազմաբերդ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքը (Ներքին Բազմաբերդ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-9 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը*՝

| ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի (Ներքին Բազմաբերդ բնակավայրը)<br>Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 02-073-0232-0055 կադաստրային ծածկագրով 9.36731հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր | 02-073-0232-0055 կադաստրային ծածկագրով 9.36731հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ էներգետիկայի հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացված պահանջը (կցվում է):

4. ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Ներքին Բազմաբերդ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Ներքին Բազմաբերդ բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | |
|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | |
| | Ե. Վարդանյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | |
| | Հ.Դավթյան |

Երևան, «21» «նոյեմբերի» 2024թ.